

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՖՐԻԿԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնատիպ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
1946 թ. № 2—3 «Տեղեկագրից»

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

891.85(02) [Տրիկ] 27392
Մ-83 Անուշտիւնուն, Ա.
Տրիկ Մ Կարմիւլուր բան.
սպանեացված.

1	2	3	4

891.99.092 [ԺՐԴ]

Վ-83

Ա. Մեծացականյան

ՖՐԻԿԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

(Հաղորդում)

A 3/920

1940—42թ.թ. աշխատելով ՀՍՍՌ Մատենադարանի Ձեռագրատանը, հնարավորություն ունեցանք հավաքելու մեր միջնադարյան բանաստեղծների կյանքի և նրանց ստեղծագործությունների մասին բազմաթիվ նոր ու կարևոր տեղեկություններ, Այսպես, օրինակ, հայտնաբերված են Գր. Նարեկացու և երեք գանձերը, մի քանի նոր տաղերն ու մեղեդինները, Վարդան Անեցու միակ (թիրի տպագրությամբ ծանոթ) Ներբողի երկու ընդարձակ ու լրիվ օրինակները, և. Շնորհալու 150-ից ավելի նոր հանելուկները (որոնց մեջ նաև երեք հայրեն), Գրիգոր Տղայի որոնված, բայց չգտնված արձակ ու չափածո մի շարք խիստ ուշագրավ ստեղծագործությունները, Ֆրիկի, Հ. Երզնկացու, Հ. Թվուրանցու, Տերտեր Երևանցու (Նորահայտ բանաստեղծ), Առ. Բաղիջեցու, Մկ. Նաղաջի, Ղուլ-Օղլի Երզնկացու (Նորահայտ բանաստեղծ), Պաղտասար Դիրի և այլ ու այլ բանաստեղծների (մինչև Մայաթ-Նովիա ու Շամչի Մելքոն) նորանոր ստեղծագործությունները:¹

Պարզվում է, որ Մկ. Նաղաջը եղել է Առ. Բաղիջեցու որդին, Բաղեր-Օղլու անոնը եղել է Ղազար (և ոչ թե Բաղրամ), Ղուլ-Օղլին ծնվել է 15-րդ դարի սկզբներին և եղել է մեր մինչև այժմ հայտնի ամենաառաջին աշուղը ... և այլն:

Ահա այդ մոլորեց, այս անգամ, մենք հրատարակության ենք հանձնում Ֆրիկի մի շատ արժեքավոր և անտիպ բանաստեղծությունը, որը գտնվում է մեր Մատենադարանի № 2939 ձեռագրում (գրիչն է բանաստեղծ Մարտիրոս Ղրիմեցին):² Այդ բանաստեղծությունն ունի հետևյալ խորագիրը.

«Խրատ ոգոյշած Խաչտաւր Կեչառեցոյ ասացեալ կամ Ֆքրըկի»:

Մանրազնին ուսումնասիրությունից պարզվեց, որ ըստ էության այդ խորագրի տակ զետեղված է ոչ թե մեկ, այլ երկու բանաստեղծություն: Առաջինը բաղկացած է քառատողյա 10 տնկրից, գրված է հայրենների չափով, ունի համապատասխան սկիզբ, վերջ և ըովանդակություն: Այս բանաստեղծության մեջ հեղինակի անվան հիշատակում չկա:

Երկրորդ բանաստեղծությունը սկսվում է 11-րդ տարից (անջատման համապատասխան նշանը ձեռագրում բացակայում է), բաղկացած է քառա-

¹ Այդ ստեղծագործությունների մի մասն արդեն պատրաստ է հրատարակության (Մատենադարանի գծով):

² Այդ ձեռագրում գտնվող Ֆրիկի մի այլ բանաստեղծության մասին լուսել ենք 1941 թվին (առաջ Շովեական գրականություն թ. 28)

տողյա 36 տներից, որոնցից երեքի մեջ նշված է Ֆրիկի, որպես հեղինակի, անունը՝ Բովանդակությամբ, ձևով ու ամբողջ էռթյամբ այս բանաստեղծությունը լրիվ է և առնչություն չունի առաջինի հետ։ Յուրաքանչյուր տողը բաղկացած է 8 վանկից (4—4) և իր ամբողջության մեջ իսկական Փրիկյան ստեղծագործություն է։

Ուշագրություն դարձնելով խորագրի վրա՝ մենք եկանք հետեւյալ հղապահությանը։ Հավանաբար առաջին բանաստեղծությունը պատկանում է Խաչատոր Կեչառեցու գրչին, որը նախագաղափար օրինակներուն կրել է Ընթարա սպոլշան Խաչատոր Կեչառեցոյ ասացեալը խորագիրը։ Հետագայում, ընդորինակությունների ժամանակ, այդ բանաստեղծությունից անմիջապես հետո արտագրվել է Ֆրիկի վերոհիշյալ բանաստեղծությունը՝ առանց խորագրի։ Հաջորդ ընդորինակողներից մեկը, պատշաճ ուշագրություն չդարձնելով այդ խնդրի վրա, այդ երկուան էլ ընդորինակել է որպես մի ամբողջություն՝ առաջինի խորագրով հանդերձ։ Մարտիրոս Դրիմեցին էլ (կամ նրա նախարդը) արտագրում է նույնությամբ, բայց որովհետեւ նա ուշագրության է առնում խորագրում և բանաստեղծության մեջ նշված անունների (Խաչ, Կեչառեցի և Ֆրիկ) տարրեր լինելու խնդիրը, սկսում է կասկածել թե ում է պատկանում այդ բանաստեղծությունը (մոռանալով կամ զժվարանալով որոշել, որ գրանք երկու բանաստեղծություններ են)։ Եվ որպեսզի հետազյում գյուրին լինի այդ խնդրի մեջնաբանումը, նայ, այդ գրիչը, խորագրին կցում է համար Ֆրիկից բառերը։ Այստեղից էլ պիտի եղակացնել՝ կամ Խաչ, Կեչառեցունն է, կամ Ֆրիկինը։ Այդ խորագիր կազմողը, կը լինում ենք, չի իմացել որ գործ է ունեցել երկու բանաստեղծությունների հետ։ Ուստի և մենք այժմ այդ խնդրի վրա պիտի նայենք ոչ այնպես, ինչպես կարծել է այդ խորագիր կազմող գրիչը, այլ այնպես ինչպես ցույց են տալիս փաստերը։

Թերեւս Հ. Պոտուրյանը մի այլ օրինակն է ունեցել ձեռքի տակ՝ որի հիման վրա էլ խոստացել է ապացուցել («Բազմավիճակ»), որ Ֆրիկը Խաչ, Կեչառեցու գրական կեղծանունն է։

Խաչ, Կեչառեցին և Ֆրիկը տարրեր անձնավորություններ են, և այս կամ նման աղավալված այլ փաստերն անզոր են նրանց նույնացնելու։

Վերոհիշյալ երկու բանաստեղծություններն էլ իրենց ընդհանուր խորագրով հանդերձ, նույնությամբ, ներկայացնում ենք տպագրության։¹

ԽՐԱՏ ՈԳՈՅՑԵԱՀ ԽԱԶԱՏՈՒԻՔ ԿԵԶԱՆԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ ԿԱՄ ՖԼՐԾԿԻ

Եղբայրք, ձեզ խրատ մի տամ։

Մի կենայք դուք շատ խոր ի քուն,

Չարդիք և արթուն կացէք։

Խիստ ի մօտ ենք զօրն ի մահու։

¹ Կատարում ենք տողատում, կետագրում և աստղանիշ կետերով զատում ենք առաջին բանաստեղծությունը երկրորդից։ Նկատվում են քերականական ու տաղաչափական ինդացիւրներ, որոնք թողնում ենք անփոփոխ։ Հապալվութերով գրված բառերը գրաւմ ենք լրիվ։

Աշխարհն է երազ նըման,
 Որ լինի մէկ անուշ ի քուն
 Եւ ի քուն լինելն ի նես
 Գանձ զըտնու թէկ անհուն:
 Խընդալոյն ցընծայր ի սիրտըն,
 Ուրախանայր ի գանձին սիրուն,
 Հանց համարէր ի սիրքն թէ
 Լինէր մէծ իշխան մեծատուն:
 Երբ ի քընոյն զարդեաւ
 Եւ տեսաւ նայ է սուտ ի քուն,
 Յանժամ փոշիման զարձաւ
 Ի վերա իւր շատ խընդալոյն:
 Յորժամ հրամայէ աստուած
 Ու խընդիր գան մարդուն հոգոյն,
 Պահիկ մի զարդար չի տան,
 Որ տեսնու զորդիքն իւր սիրուն:
 Զաշելն ողորմիկ ածէ
 Ու նայի դէմ սիրելոյն,
 Ի ճարկէ-ճարակ ընկնի,
 Զի զըտնու հընար զերծանելու:
 Հառաչէ սրտէն ի վեր,
 Կոչէ զմայր տըղակներուն
 Ու հանց պատասխան տայ իւրն,
 Որ նուաղի խեղճ ասելուն,
 — Թոյ կէս մարմնոյտ եմ ես,
 Որ անձն իմ ներքե հողին.
 Զաքեր, ձեր ծընողն եմ ես,
 Որ երթամ այլ ոչ զամտ
 Հիմիկ ձեզ պէտ արէք,
 Խմացէք չարն ու զբարին,
 Չարին ատող լինիք,
 Որ չի լինիք բաժին գեհենի:
 Բարեացըն սիրող լերուք,
 Գործեցէք-արէք ձեզ անուն,
 Գէմ քան ըզթարթելն ական
 Մահն ի մօտ է աղամորդույն:

* * *

Կամիմ բան մի խօսել
 Անցաւորիս մեղաց վերայ,
 Ով որ լըսէ յօժար սըրտով,
 Թող իմանայ թէ մւստի կուգայ:
 Ուղիղ սրտով ականջ դնէ
 Ու զիր հոգոյն զուռն բանայ,
 Փառաւորի ինքն իր մըտին,
 Ականջվընուն անուշ կուգայ:

Օրհնեալ անուն ըստեղծողին,
 Որ հողուն հանց չնորք կուտայ,
 Որ կու կարենք հանց բան ասել,
 Որ իմաստնոցն դուր կուգայ:
 Փառք աստուծոյ անմահ բանին,
 Որ մըտացն լոյս կուտայ,
 Որ մենք պատմենք բանն առակաց
 Աստընորիս թէ ոնց կուգայ:
Ծօվ մ' էր բխել անցաւորէս,
 Չորեքանկիւն բաժնել է նայ,
 Չորսն ի չորս տեղ դադարել
 Եւ չորս անուն առել է նայ:
 Չորսէն ի չորս ուռիկ ելել,
 Վասն որիս բանին վերայ,
 Չորսըն չորս ցեղ է զարդարել
 Ամէն ծաղկանց նըման է նայ:
Մէկն էր գեղին, մէկն էր կարմիր,
 Հետ մէկ-մէկի հասել է նայ,
Մէկն էր կապուա, մէկն էր կանանչ,
 Հանց որ իրեն նըման չիկայ:
 Չորեք գիմաց մէկտեղ եկել՝
 Աստընորիս բանին վըկայ,
 Բարձր անառոր ծառմ' է ելեր,
 Ամէն բանիւ մեղ պիտենայ:
 Տասերկու ճիւղք է ձըքէլ
 Համարով տերեւ տըւած նոցա,
 Ամէն ճըղի՛ եռուուն տերեւ,
 Որ արարածք հանքչի նայ:
 Երկու մըկունք առաջ ընկած
 Հանց կու դատին ծառին վերայ,
 Մէկն էր սև, մէկըն ըսպիտակ,
 Մէկըն բանին ճըղին վերայ:
 Վերեն զեղը կուբանին,
 Տակըն կըռծեն, որ կոտրի նայ,
 Զքաղցրութիւնն անկից ցըցընեն,
 Որ կոտրիլն մարդ չիմանայ:
 Վիշապ մի մեծ և ահագին
 Բուռն էր դըել ճըղին վերայ,
 Բերանն ի բաց ու կու հայէր,
 Մարդ որ ընկնէր՝ կուլ տայը դնայ:
 Մարդ մի տեսաւ զքաղցրը մեղը,
 Խիստ ցանկացաւ ուտել զնայ,
 Մըտիկ չարաւ կըռծելոյն
 Մկներն զճուղքն որ կոխել նայ,
 Անկարծակի ճիւղն հատաւ,
 Մարդըն անկաւ բունին վերայ,

Վիշապըն վազեց բընէն,
 Բերանն ի բաց, կուլ երիտ զնայ,
Արդ, Ֆրեկ, զմիտքըտ բաց
 Ու իմացիր զառակըս որ կայ,
 Տես ու քննէ թէ զինչ է ծովս
 Ու զինչ է չորս անկիւնն նըմայ,
 Կամ ինչ է չորս ուռն եկել
 Աստընուռիս վերայ,
 Կամ զինչ է ցեղ, որ զարքարել,
 Ամէն ծաղկանց նըման է նայ,
 Կամ զինչ էր այն չորս ցեղ վըկայն՝
 Ի սուտ աստընվորիս վերայ,
Մէկտեղ եկել են՝ վըկայեն
 Թէ աստընվորըս հանց կու գընայն
 Կամ զինչ է բարձր, ահաւոր
 Ծառ մի կայ մեր ճըղերն ի հետ նորայ,
 Բարձր ահաւոր կամ տերևնին,
 Որ համարով եռեմնական տըված նոցա.
 Կամ զինչ էր այն երկու մըկունքն,
 Որ դասին ծառին վերայ,
 Կամ զինչ է այն քաղցր ու մեղըը
 Կամ ինչ կըսծեն, որ կոտըի նայ,
 Կամ ինչ էր այն մեծ, չար վիշապըն,
 Որ բուն գրել քեօքին վերայ,
 Կամ ինչ հայիլ օր կու մնայր
 Մարզըն ընկնիւըն՝ կուլ տայր զնայ,
 Ե, Ֆըրիկ, բաց զրերանտ
 Ու հասկըցուը զառակըս որ կայ,
 Զծովտ ի վեր բեր ու այտնէ,
 Զբանքըտ յայտնէ և պատմէ ինչ ցեղ որ կայ,
 Ծովս է աստունորըս
 Ու զարարածըս որ լինենայ,
 Զորս անկիւնն է չորս քընճերն,
 Որ անունով յիշվին նոքայ:
Մէկն յարելք, մէկն յարեմուտք,
Մէկըն հարաֆ, մէկըն հիւսիս,
 Զորսէն չորս դուռն որ ելանէ,
 Զորս տարերքն որ կայ:
Մէկըն գեղին, մէկըն կարմիր,
 Հուըրըն քամին, որ կու շնչայ,
Մէկըն որ կապուտ, մէկըն՝ կանանչ,
 Զուըրն ու հողըն որ լինենայ:
 Զորեք գիհաց որ վըկայել,
 Զորս եղանակըս է որ կուգայ,
Մէկըն աշուն, մէկըն գարուն,
 Զըմեռն, ամառն որ կու լինի:

Բարձր, ահաւոր ծառն, որ կանքնել
 Բոլոր տարին է մեր վերայ,
 Երկուտասասն ճիւղքն օր ձըքել,
 Իր ամիսն է հետ նորայ,
 Համբով տերեւ տըլված նոցա՝
 Համբով օրերս—որ կու գընայ,
 Ամէն ճըղքի եռուուն տերեւ՝
 Ամոց օրերքն—որ կու լինայ,
 Մըլունքն սև ու ըսպիտակ՝
 Տիւն ու գիշերն, որ կու գընայ,
 Մելոք քաղցրուկ—է՛ սուտ կենցաղը,
 Տակի կըռծելն—նոր կոտրի նայ,
 Վիշապըն մէծ և ահագին՝
 Մահու օրերս է, որ կուգայ,
 Բունն որ գըկլ վըրայ տակին,
 Գերեզմանն ի ներս որ տի լինայ,
 Մարդն որ տեսաւ զքաղձրութիւնն,
 Խիստ ցանկացաւ ուտել ըգնայ.—
 Սուտ կենցաղն է, որ կու խարէ,
 Զիմացնելն թէ մահ կուքայ,
 Անկարծակի ճիւղքըն հատաւ,
 Մարդն անկաւ բընին վերայ.
 Այն խարին է յաղամորդոյա,
 Որ սատանի բաժին կըլայ,
 Վիշապն էր վագէր ի գուրս,
 Բերանն ի բաց, կըլաւ ըգնայ,
 Այն սատանայ է դըժոխոց,
 Որ անդադար ըզմեղ կորսայ,
 Մըսկին Ֆըրիկ ողորմելի,
 Կանքնէ՛ ոտաց, աղօթք ըրայ,
 Երեսըտ դիր վերայ մոխրին
 Ու անդադար ասայ մեղայ,
 Սիրտըտ ամուր պահէ մեղաց՝
 Ասուընվորիս չի ցանկանայ,
 Որ քեզ հասնի տէրն ու օգնէ
 Ու չի թողուր ըզքեզ որսայ,
 Փառըք փառաց թագաւորին,
 Որ իմաստնոց դուռն բանայ.
 Մենք կոհաննամք ողորմածէն
 Թէ մեղատորն ոնց կու գընայ:
 Որ զանարժանըս սրժանացոյց
 Եւ զմեզ փրկել խիստ կու ջանայ.
 Փառք իւր անհաս մարդեղութեանն
 Յաւիտենից յայժմ արակայ:

A 31940

37338

[204]

